

գալի վարդապետի երովպացոյ, ի միաբանութենէն արքայն Յակոբաւ վաճառեցն երուստղիմա. ամի Տեառն 1829. Յունվարի 24. Դրիէսթ. իմ դուզնաքեայ հանդերձ ավելվածովք: Փիլիպպոս թաթար»։ Նոյն ձեռագիրին մէջ ուրիշ տեղ մը Փիլիպպոս թաթար իր մասին կը գրէ. «30 տարի է ֆռանկաց երկիրն եմ՝ ամենեւին չլսեցի հալածումն»։ Եւտոյ գրիչը կ'աւելցնէ. «յաշակերտացն Սարգիս վարդապետի ֆէրմանեան եւզովիացոյ՝ մտերիմ իրաւախոհ փիլիպպոս դպիր Առխութեանց Մաշկերտցոյ»։ (Տաշ. Յուց. էջ 388—89)։ Եւդոկիացի մականունը շփոթուած կը թուի Երովպացիին հետ։ Սարգիս վրդ. Ֆէրմանեան 1768 ին վարած է Թիֆլիսի նուիրակութեան, դարպասընկալի եւ փոխանորդի պաշտօնները. 1773 ին ալ ընդօրինակած է մեկն. Ժք. մարգարիկ եւ 1777 ին Մեկն. երգոց երգոյն խորագրով Կոռնելիոս Վեկեանի կամ Վեկեանի (a Lapide) գիրքերը, (թարգմ. Ղուկաս վրդ. Խարբերոցիի, 1746 ին) (ՄՁ. Թ. 24 եւ 643). Սարգիս վրդ. վախճանած է Ս. Յակոբի վանքին մէջ եւ յիշատակ թողած է երկու արձաթեայ գոգնոցներ։

ՍՍՐԳԻՍ ՍՐՔԵՊՍ. ԶԱԼԱԼԵԱՆ, ԱՐՅԱԽԵՑԻ.—Մբ. Ս. Էջմիածնի. Ծ. 1810 ին. վարած է քարոզչական եւ առաջնորդ. պաշտօններ Ռուսաստանի մէջ, 1867 ին հրաւիրակ Դէորդ Դ. Կթղ. Ի Դրիգոր վրդ Մուշեղեանցի եւ Նիկողայոս պէյ Յովսէփեանցի հետ։ 1869 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, նոյն տարին Եսայի պտրք. կը շնորհէ անոր ծաղկեայ փիրոն եւ գոհարացարդ մասանի մը անուանելով զՋալալեան պառնակալ անդամ Ս. Յակոբի Միաբանութեան։ Դէորդ Դ. Կթղ. ը կոնդակով մը Սարգիս արքեպս. Ջալալեանը 1868 սեպտ. 13 ին Պոլսի կը զրկէ իբր իր ֆնայուն ներկայացուցիչը, բայց պետական եւ ազգային տեսակէտով Սարգիս արքեպս. ին այս նոր պաշտօնը՝ նախընթաց չունենալուն՝ կը մերժուի, եւ Պոլսէն կը մեկնի 1869 Յունիս 14 ին եւ կը վերադառնայ Էջմիածին. (Ազգայն. էջ 4156—58)։ Ջալալեան արքեպս. 1878 սեպտ. 28 ին կը պատրաստէ իր կտակագիրը, որով Ազգին կը կտակէ 25,000 ռուբլի եւ պայման կը դնէ որ՝ երբ այդ գումարը՝ 125 տարիէն՝ տասներկու միլիոն արծաթ ռուբլիի հասնի, այն ժամանակ միայն գործադրուի իր կտակը, եւ կտակակոտար կը